«Հացաշենի հիմնական դպրոց»ՊՈԱԿ

Հաստատում եմ

Տնօրեն՝————————

ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Դասղեկ ՝ Ա. Բարսեղյան

ԿՐԹԱԿԱՆ – ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանում սովորում են 9 -ը աշակերտ: Երեխաները առողջ են , բոլորն ապահովված են դասագրքերով: Սիրում են դասավանդող ուսուցիչներին , հարգալից են նրանց հանդեպ:

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հետևել սովորողների առաջադիմությանը , վարքին : Սիստեմատիկաբար հետևել դասարանական կոլեկտիվի ուսումնական գործունեությանը ընդհանրապես և յուրաքանչյուր աշակերտի ուսումնական գործունեությանը՝ մասնավորապես : Այն հնարավորություն է տալիս ստուգել և գնահատել սովորողների գիտելիքները , ժամանակին կանխել և վերացնել ուսման ընթացքում առաջացած բացթողումները :

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Երեխաներին տալ որոշակի ճանաչողական գիտելիքներ Հայ առաքելական եկեղեցու վերաբերյալ : Որոշակի պատկերացում տալ նրա կառույցի , արարողակարգի , խորհուրդների և տոնների մասին:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների գեղագիտական դաստիարակության գործում կարևոր է գեղեցիկի հետ առնչվելու իրավունքը: Դաստիարակել ճիշտ վերաբերմունք դեպի ժամանակակից արվեստը :

3.3 Ռազմա - հայրենասիրական դաստիարակություն

Երեխաների հայրենասիրական դաստիարակության հարցում կարևոր դեր կարող են խաղալ ֆիդայիների կյանքն ու գործունեությունն : Սարդարապատի հերոսների կերպարները , Արցախյան պատերազմի հերոսների , Հայրենական մեծ պատերազմի հայ հերոսների օրինակները :

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակության միջոցով ձևավորել հոգատար վերաբերմունք սեփական անձի՝ մարմնի կեցվածքի նկատմամբ զարգացնել կամային հատկանիշներ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մեջ սերմանել այն գաղափարը , որ աշխատանքի միջոցով կարելի է հասնել հաջողությունների : Գնահատել սեփական և այլոց աշխատանքը:

3.6 Դպրոց – ընտանիք կապը

Պահպանել սերտ կապ ծնողների հետ: Կարևորել դպրոց - ընտանիք կապը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը
1	Զրույց - «Վարվեցողության կանոններ»	սեպտեմբեր
2	Անկախության տոն	սեպտեմբեր
3	Զրույց - «Ընկերասիրություն»	սեպտեմբեր
4	Ինչպես պաշտպանվել COVID - 19 - ից	սեպտեմբեր
5	Ուսուցչի օր	հոկտեմբեր
6	Շրջակա միջավայրի պահպանումը	հոկտեմբեր
7	Ինչպես հանդուրժել դիմացինին	հոկտեմբեր
8	Բանակցություններ	նոյեմբեր
9	Արարք և հետևանք	նոյեմբեր
10	Իմ հայրենիքը իմ տունն է	նոյեմբեր
11	Երեխայի իրավունքները	նոյեմբեր
12	Երկրաշարժի օր	դեկտեմբեր
13	Իմ սիրած մարզաձևը	դեկտեմբեր
14	Զրույց - «Ձմեռող թռչունների մասին»	դեկտեմբեր
15	Ամանորի տոն	դեկտեմբեր
16	Զրույց - «Իրավունք և պարտականություն»	հունվար
17	Լավագույն պաստառի ստեղծում «Պայքարենք վտանգավոր սովորույթների դեմ»	հունվար
18	Ճիշտ օգտվենք օրվա ռեժիմից	հունվար

19	Բանակի տոն	հունվար
20	Զրույց - «Ճանապարհին՝ մարդիկ , մեքենաներ , կանոններ»	փետրվար
21	Հասարակություն : Վարքի կանոններ	փետրվար
22	Հասարակություն: Խառնաշփոթ	փետրվար
23	Թումանյանական օրեր	փետրվար
24	Խնդիրների համատեղ լուծումներ որոշել	մարտ
25	Մայրության և գեղեցկության տոն	մարտ
26	Կոնֆլիկտների հաղթահարում	մարտ
27	Վիկտորինա հանելուկներ , առածներ , ասացվածքներ	մարտ
28	Զրույց - «Խնայել հացը , ջուրը»	ապրիլ
29	Զրույց - «Տան ջերմություն»	ապրիլ
30		ապրիլ
31	Մեծ եղեռն	ապրիլ
32	Զրույց - «Աշխատանքի անհրաժեշտությունը»	մայիս
33	Աշակերտների տարեկան առաջադիմության ամփոփում	մայիս
34	Դասագրքերի հանձնում	մայիս